ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

2-ՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-334-11.07.2022-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածը 5-րդ մասից հետո լրացնել նոր՝ 5.1-ին և 5.2-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, ով որպես օտարերկրյա քաղաքացի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն է ձեռք բերել որևէ մարզաձևի Հայաստանի Հանրապետության հավաքական թիմում (որևէ տարիքային խմբի) հանդես գալու համար և մինչև 2021 թվականի մայիսի 1-ը պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքը կորցրել է:

5.2. Սույն հոդվածի 5.1-ին մասով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու համար քաղաքացին կամ համապատասխան ֆեդերացիան մինչև 2022 թվականի նոյեմբերի 1-ը դիմում է Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական կառավարման լիազորված մարմին, որը մեկ ամսյա ժամկետում պարզում է ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը սույն հոդվածի 5.1-ին մասին և միջնորդություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն,

որը քաղաքացուն ազատում է պարտադիր զինվորական ծառայությունից՝ Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի միջնորդությունը ստանալուց հետո՝ մեկ ամսյա ժամկետում:»:

Հոդված 2. Օրենքի 25-րդ հոդվածը 11-րդ մասից հետո լրացնել նոր՝ 11.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«11.1. Որպես օտարերկրյա քաղաքացի որևէ մարզաձևի Հայաստանի Հանրապետության հավաքական թիմում (որևէ տարիքային խմբի) հանդես գալու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած և մինչև 2021 թվականի մայիսի 1-ը պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքը կորցրած անձանց պարտադիր զինվորական ծառայությունից ազատում տրվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով՝ Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի միջնորդությունը ստանալուց հետո՝ մեկ ամսյա ժամկետում:»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքը գործում է մինչև 2023 թվականի հունվարի 31-ը:

~~ՆԱԽԱԳԻԾ~~

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

~~Ընդունվել է 20___ թվականի _____ ___-ին~~

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ»

~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ~~Ն~~ ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածը 5-րդ մասից հետո լրացնել նոր՝ 5.1-ին և 5.2-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, ով որպես օտարերկրյա քաղաքացի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն է ձեռք բերել որևէ մարզաձևի Հայաստանի Հանրապետության հավաքական թիմում (որևէ տարիքային խմբի) հանդես գալու համար և մինչև 2021 թվականի մայիսի 1-ը պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքը կորցրել է:

5.2. Սույն հոդվածի 5.1-ին մասով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու համար քաղաքացին կամ համապատասխան ֆեդերացիան մինչև 2022 թվականի ~~հոկտեմբերի 1~~-ը նոյեմբերի 1-ը դիմում է ~~սպորտի բնագավառում պետական կառավարման լիազորված մարմին~~ Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական կառավարման լիազորված մարմին, որը մեկ ամսյա ժամկետում պարզում է ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը սույն հոդվածի 5.1-ին մասին և միջնորդություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, որը քաղաքացուն ազատում է պարտադիր զինվորական ծառայությունից՝ ~~սպորտի բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի~~ Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի միջնորդությունը ստանալուց հետո՝ մեկ ամսյա ժամկետում:»:

Հոդված 2. Օրենքի 25-րդ հոդվածը 11-րդ մասից հետո լրացնել նոր՝ 11.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«11.1. Որպես օտարերկրյա քաղաքացի որևէ մարզաձևի Հայաստանի Հանրապետության հավաքական թիմում (որևէ տարիքային խմբի) հանդես գալու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած և մինչև 2021 թվականի մայիսի 1-ը պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքը կորցրած անձանց պարտադիր զինվորական ծառայությունից ազատում տրվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով՝ ~~սպորտի բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի~~ Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի միջնորդությունը ստանալուց հետո՝ մեկ ամսյա ժամկետում:»:

Հոդված 3. ~~Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքը գործում է մինչև ~~2022 թվականի դեկտեմբերի 31-ը~~ 2023 թվականի հունվարի 31-ը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-334-11.07.2022-ՊԱ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի վերնագիրը	. Նախագծի վերնագրից առաջարկում ենք հանել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը, այն է՝ «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը եւ «օրենք» բառը: Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 1-ին հոդված	Հիմք ընդունելով օրենքի լրիվ անվանման հիշատակման մեջ ներառվող հաջորդական տվյալների	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ամբողջությունը՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածից հանել «N» նշանը:		
3.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 1-ին հոդված, Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկում ենք «սպորտի բնագավառում պետական կառավարման լիազորված մարմին» ձևակերպումը փոխարինել «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» օրենքում կիրառվող «Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական կառավարման լիազորված մարմին» հասկացությամբ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 3-րդ հոդված	Առաջարկում ենք հանել Նախագծի 3-րդ հոդվածի վերնագիրը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված կանոնը՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

5.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք լրացման 5.2 կետում «հոկտեմբերի 1-ը» բառերը փոխարինել «նոյեմբերի 1-ը» բառերով, որպեսզի նշված ժամկետը գործնականում կիրառելի լինի՝ հաշվի առնելով իրավական ակտի ընդունման հավանական ժամկետը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 3-րդ հոդված, 2-րդ կետ	Առաջարկում ենք «մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «մինչև 2023 թվականի հունվարի 31-ը» բառերով, որպեսզի Նախագծով սահմանված ժամկետները գործնականում կիրառելի լինեն՝ հաշվի առնելով իրավական ակտի ընդունման հավանական ժամկետը:	Ընդունվել է:	Ընդունվել է: